Աստղային մուկը

հեղինակ՝ Ֆրեդերիկ Բրաուն

թարգմանիչ՝ Ջ. Ղազարյան

Այն ժամանակ մկնիկ Միտկին դեռ չուներ իր անունը։ Նա սովորական մկնիկ էր եւ ուրիշ մկնիկների հետ ապրում էր հռչակավոր հերր պրոֆեսոր Օբերբյուրգերի տան հատակի տակ։ Դա այն նույն Օբերբյուրգերն էր, որը մի ժամանակ հիացմունք էր պատճառում Վիեննային եւ Հեյդելբերգին, իսկ հետո փախուստի դիմեց իր ազդեցիկ հայրենակիցների անսահման հիացմունքից:

Այդ անսահման հիացմունքը հարուցում էր ոչ թե ինքը հերր Օբերբյուրգերը, այլ ոմն մի գազ. լինելով հրթիռային վառելանյութի ոչ էֆեկտիվ կողմնակի պրոդուկտ, այն կարող էր մեծ հաջողությամբ օգտագործվել եւ այլ նպատակներով:

Իհարկե, եթե պրոֆեսորը տար ճիշտ բանաձեւը, նա… մի խոսքով, այսպես թե այնպես պրոֆեսորին հաջողվեց փախչել եւ բնակություն հաստատել Կոնեկտիկուտում, նույն այն տանը, որտեղ ապրում էր եւ Միտկին:

Պստլիկ մոխրագույն մկնիկ եւ ոչ բարձրահասակ, ճերմակահեր մարդ։ Ոչ մեկի, եւ ոչ էլ մյուսի մեջ ոչ մի արտասովոր բան չկար, մանավանդ Միտկիի։ Նա ընտանիք էր կազմել, սիրում էր պանիր եւ եթե մկների մեջ ռոտարիանցիներ[1]լինեին, Միտկին կհարեր նրանց:

Հերր պրոֆեսորն աչքի էր ընկնում որոշ տարօրինակություններով։ Քանի որ նա համոզված ամուրի էր, ապա ոչ ոքի հետ չէր կարող խոսել, բացի ինքն իրենից, եւ աշխատանքի ընթացքում նման հրաշալի զրուցակցի հետ մտքեր փոխանակելը հերր Օբերբյուրգերին մեծ բավականություն էր պատճառում։ Ինչպես մենք կիմանանք ավելի ուշ, դա շատ կարեւոր եղավ Միտկիի համար. նա օժտված էր գերազանց լսողությամբ եւ ամեն գիշեր լսում էր պրոֆեսորական մենախոսությունները:

Նա, իհարկե, չէր ըմբռնում դրանց իմաստը եւ, հավանաբար, պրոֆեսորը մկնիկին թվում էր մի մեծ եւ աղմկոտ գերմուկ, որը չափից դուրս շատ էր ծվծվում:

— Իսկ այժմ,— ասում էր գիտնականը,— մենք ձեզ հետ միասին կտեսնել խողոֆակի մշակման ճշտություն։ Դա երեվա մեկ հազառեռոռդ դյուրմ ճշտություն։ Ա՜խխա՜խա՜, հոյակապ։ Իսկ այցմ…

Այդպես անցնում էին օրեր, գիշերներ, ամիսներ։ Փայլփլուն կոնստրուկցիայի վրա հետզհետե ավելանում էին նոր դետալներ, եւ դրա հետ միասին ավելանում էր պրոֆեսորական աչքերի փայլը։

Մեքենան, որ ամբողջովին պատված էր լարերով, ինչպես մարդու օրգանիզմը՝ արյունատար անոթներով, ուներ մոտ երեքուկես ոտնաչափ երկարություն։ Հավաքված լինելով ժամանակավոր շրջանակի վրա, այն կանգնած էր սենյակի մեջտեղում։

Պրոֆեսորն ու Միտկին ապրում էին չորս սենյականոց տան մեջ։ Բայց թվում էր, թե պրոֆեսորն այդ բանը չգիտեր։ Սկզբում նա մեծ սենյակն ուզում էր օգտագործել միայն որպես լաբորատորիա, բայց շուտով հասկացավ, որ շատ ավելի հարմար է հենց այստեղ— անկյունում դրված մահճակալի վրա քնելը (եթե նա ընդհանրապես երբեւիցե քնում էր), եւ անպաճույճ ուտելիքն էլ պատրաստել նույն գազայրոցի վրա, որտեղ հալվում էին TNTի ոստեգույն հատիկները։ Պրոֆեսորը աղ էր գցում այդ վտանգավոր ապուրի մեջ, գցում էր արտառոց համեմունքներ, բայց երբեք չէր ուտում։

— Իսկ այցմ մենք դա լձնել խողովակի մեջ եւ տեսնել։ Եթե առաջին խողովակ պայթեցնել երկրորդ, երբ առաջին խողովակ…

Այդ գիշեր Միտկին արդեն գրեթե որոշել էր ընտանիքի հետ տեղափոխվել մի ավելի հուսալի բնակարան, որը չէր տարուբերվի եւ չէր աշխատի պոկվել հիմքից։ Բայց եւ այնպես Միտկին չլքեց այդ տունը, որովհետեւ այստեղ նրա առջեւ բացվեցին լրացուցիչ հնարավորություններ։

Ամենուրեք հայտնվեցին նոր բներ եւ, օ՜ երջանկություն, մի մեծ ճեղք էլ սառնարանի պատի մեջ, որտեղ պրոֆեսորը հազար ու մի բանի հետ պահում էր նաեւ մթերքները։

Իհարկե, խողովակները իրենց չափերով մեծ չէին մազանոթներից, թե չէ մկան բունը շրջապատող տունը վաղուց հօդս ցնդած կլիներ։ Եվ, իհարկե, Միտկին ո՜չ կարող էր ենթադրել, թե ինչ տեղի կունենա, ոչ էլ կարող էր հասկանալ պրոֆեսորի անգլերենը (ինչպես, իհարկե, անգլերենի ցանկացածդ տարբերակը), այլապես նա իրեն թույլ չէր տա գայթակղվել նույնիսկ սառնարանի պատի ճեղքով։

Այդ առավոտ իսկական տոն էր պրոֆեսորի համար։

— Վառելանյուտ աշխատել։ Երկրորդ խողովակ չպայտել։ Եվ առաջին ծծել։ Եվ նա ավելի զորեխ ու շատ ազատ տեղ մնալ խուցի համար։

Ախ, հա, խուցը։ Ահա այստեղ էր հայտնվել Միտկին։ Ճիշտն ասած, պրոֆեսորը դեռ չգիտեր այդ մասին, նա ուղղակի տեղյակ չէր, որ աշխարհիս երեսին ապրում է Միտկին։

— Իսկ այցմ,— ասում էր նա իր պաշտելի ունկնդրին,— հարկավոր կոմբինացիա, որ վառելանյուտի խողովակ աշխատել հակահոսանքի ռեժիմով։

Ահա հենց այս ժամանակ էլ պրոֆեսորի հայացքն առաջին անգամ կանգ առավ Միտկիի վրա։ Ավելի ճիշտ, այն գամվեց մի զույգ մոխրագույն բեղիկների ու սեւուկ, փայլուն քթիկի վրա, որ դուրս էր ցցվել հատակի անցքից։

— Ա՛յա՛յ,— ասաց գիտնականը,— այս ով շամանել մեզ մոտ,— ՄիտկիՄաուս սեփական անցով։ Ինչպես հաճելի կլինի ձեզ ճանապարհորտել մյուս շաբատ։ Դե կտեսնվենկ։

Երբ պրոֆեսորը քաղաք ուղարկեց մթերքներ բերելու, նա պատվիրեց ոչ թե թակարդ, որ սպանի մկնիկին, այլ սովորական ճաղերով վանդակ։ Հենց որ այն դրեցին, Միտկիի սուր քթիկը իսկույն զգաց վանդակի մեջ դրված պանրի հոտը, եւ այսպես իր քթիկի պատճառով էլ մկնիկը կամավոր գերի ընկավ։

Ոչ, այդպիսի գերությունը ծանր չես անվանի։ Միտկին պատվարժան հյուր է։ Պրոֆեսորը վանդակը տեղավորել էր սեղանի վրա, որտեղ նա մեծ մասամբ աշխատում էր, եւ անընդհատ պանիր էր ներս զցում ճաղերի արանքից։ Այժմ պրոֆեսորը զրուցակից ուներ։

Հասկանալ, Միտկի, եւ ուզել սպիտակ մկան համար մարդ ուղարկել Հարտֆորդ, լաբորատորիա, բայց ինչո՞ւ ես տա անել, երբ տու կաս։ Ես համոզված, դու խելոք եւ առողջ եւ ավելի լավ զգաս երկար ճանապարհորդություն, քան լաբորատորիայի մուկ։ Ախ, հա, դու օրորել բեղիկներ, դա նշանակել այո՞։ Ո՞չ։ Ու դու սովոր մութ բուն ու ավելի քիչ տառապել գլաուստրոֆոբիա, չէ՞։

Եվ Միտկին գիրանում էր ու իրեն երջանիկ զգում, նա նույնիսկ չէր փորձում վանդակից դուրս գալ։ Վախենում եմ, որ նա մոռացել էր նաեւ իր լքյալ ընտանիքի մասին։ Ճիշտ է, նա գիտեր (եթե նա ընդհանրապես որեւէ բան գիտեր), որ նրանց մասին բոլորովին չարժեր մտահոգվել։ Համենայն դեպս, քանի դեռ պրոֆեսորը չի հայտնաբերել եւ չի փակել սառնարանի ճեղքը։ Իսկ պրոֆեսորի գլուխը բոլորովին չէր մտածում սառնարանի մասին։

— Իսկ այցմ, Միտկի, մենք այդ ստաբիլիզատոր տեղավորել այ այսպես։ Նա աշխատել մթնոլորտում վայրէջքի համառ։ Նա եւ այ, սռանք, ես կարծել, բառեհաջող ու ոչ շաթ առագ քեզ իջեցնել, եւ քո գլխիկ չցավալ հարվածից։

Բնականաբար, Միտկին չորսաց այդ «ես կարծել»— էի չարագույժ երանգը, որովհետեւ նա ընդհանրապես չհասկացավ այդ բառերի իմաստը։ Ինչպես արդեն ասվել է, նա չգիտեր անգլերեն լեզուն։ Համենայն դեպս՝ այդ ժամանակ։

Բայց հերր Օբերբյուրգերը, միեւնույն է, զրուցում էր նրա հետ։ Նա նույնիսկ նկարներ էր ցույց տալիս մկնիկին։

— Դու տեսել այս մուկ, այս մուկի պատվին քեզ անվանել Միտկի։ Ի՞նչ։ Ո՞չ։ Տես, սա Ուոլտ Դիսնեյի իսկական ՄիտկիՄաուս։ Բայց ես կարցել, դու ավելի սիրուն, Միտկի։

Հավանաբար, պրոֆեսորը մի քիչ ցնդած էր, դրա համար էլ խոսում էր պստլիկ մոխրագույն մկնիկի հետ։ Նա իսկապես էլ ցնդած էր, եթե հրթիռ էր սարքում թռիչքի համար։ Տարօրինակ է, չէ որ հերր Օբերբյուրգերը իսկական գյուտարար չէր։ Ինչպես որ նա ամենայն ջանասիրությամբ բացատրեց Միտկիին, ինքը ոչ մի դետալ չէր հորինել։ Հերր պրոֆեսորը ինժեներ էր, նա կառուցում էր մեքենաներ եւ ստիպում էր դրանց աշխատել, օգտագործելով ուրիշ մարդկանց մտքերը։

Նա սկսեց հանգամանորեն բացատրել մկնիկին.

— Դա՝ միայն բացառձակ բծախնտրություն եւ մաթեմատիկական ճշտության հառց։ Ու դա մենք ունենալ, ճիշտ չէ՞, Միտկի։ Մենք պարզապես կոմբինացիա անել ու ի՞նչ ստանալ։ Երկրորդ տիեզերական առագություն։ Դա շատ պետք հաղթահառել Երկրի ցգողականություն։ Ամենուրեկ կա անհայտ գորցոն։ Մենք ամեն ինչ չիմանալ մթնոլորդի մասին, տրոպոսֆերի, ստրատոսֆերի մասին։ Մենք կառծել, որ մենք իմանալ օդի ճշգրիտ քանակություն, ու մենք հաշվել դիմատրություն։ Բայց մենք համոզվա՞ծ։ Հարյուր տոկո՞ս։ Ոչ, Միտկի, մենք այնտեղ չեղել։ Իսկ ճշտություն պետք է լինել շատ բարցր, օդի փոքր շառժում, եւ ամեն ինչ ջուր կլցֆի։

Բայց դա բնավ չէր մտահոգում մկնիկին։ Ալյումինից ձուլված կոնի ստվերում նա ճարպակալում էր եւ միանգամայն երջանիկ էր։

— Բարի օր, Միտկի, բարի օր։ Քեզ չխաբել ու կեղծ հավաստիքներ չտալ, Միտկի։ Ճանապարհորդություն վտանքավոր, իմ փոքրիկ բարեկամ։ Դու ունենալ հավասար շանս։ Ոչ թե Լուսին կամ պայթյուն, այլ Լուսին ու պայթյուն կամ բառեհաջող վերադառնալ Երկիր։

Հասկանալ, իմ պստիկ խեղճ Միտկի, Լուսին սարքած չի կանաչ պանրից, իսկ եթե նա լինել պանրից, դու չկարողանայիր նրա վրա ապրել ու նրան ուտել։ Այնտեղ գրեթե չկա մտնոլորտ, որ դու քո բեղերով կարողանաս ոխջառոխջ իջնել Լուսնի վրա։

Ու դու այդ ժամանակ ինձ հարցնել, ինչո՞ւ ես քեզ ուղարկել։ Հրթիռ չի կարող վերցնել եռկռռռդ տիեզեռական առագություն, սա միայն էքսպերիմենտ, բայց ուռիշ

տեսակ։ Եթե հոթիռ չթռչի մինչեւ Լուսին, նա ընկնել Երկիր, չէ՞։ Միեւնույն, ուրիշ սառք տալ ինֆորմացիա այնտեղի մթնոլոռտի եռեւույթների վեռաբեռյալ։ Դու էլ մեզ տալ ինֆորմացիա, ինչ էլ որ լինել, եթե դու մնալ ողջ, ուռեմն, ամոռտիզատոռների ուժ բավականացնել երկրային տիպի մթնոլոռտի համար։ Դու հասկանա՞լ։

Ու երփ մենք ուղարկել հոթիռ Վենեռա, մենք ունենալ շատ ինֆորմացիա ու մենք հաշվել թեւերի եւ ամոռտիզատոռի չափեր, չէ՞։ Հնարավոր մենք չհանդիպել, բայց դու լինել ամենահայթնի մկնիկ։ Դու առաջին դուռս գալ երկրային մտնոլորտից, դուրս գալ տիեզերք։

Միտկի, մարդիկ քո անուն սկսել դնել Աստղային մուկ։ Ես նախանձել քեզ։ Ինչպես ես ուզել լինել քեզ պես պստիկպստիկ ու թռչել միասին։

Եվ ահա եկավ այն օրը, երբ խցիկի դուռը բացվեց։

— Ցտեսություն, պստիկ ՄիտկիՄաուս։

Լռություն։

Խավար։

Աղմուկ։

Եվ հիմա հերր Օբերբյուրգերը միայն մի բանի մասին էր մտածում. «Եթե հոթիռ չթռչել Լուսին, նա ընկնել Երկիր, չէ՞»։

Բայց հոյակապ մշակված պլաններն էլ միշտ չեն իրականանում մարդկանց ու մկների համար։ Նույնիսկ աստղային մկների համար։

Եվ բոլորը Պրկսլի պատճառով։

Պրոֆեսորին չէր լքում միայնակության զգացումը։ Ինքն իր հետ ունեցած զրույցները, առանց Միտկիի, թվում էին դատարկ ու անիմաստ։

Հնարավոր է, որ կգտնվեն մարդիկ, որոնք կասեն, թե փոքրիկ մոխրագույն մկնիկը որպես զրուցակից՝ վատ է փոխարինում կնոջը, բայց ուրիշներն էլ նրանց հետ չեն համաձայնվի։ Ինչեւիցե, պրոֆեսորը երբեք կին չի ունեցել, իսկ մկնիկը՝ կար զրուցելու համար, այնպես որ հերր Օբերբյուրգերը զրկվել էր մեկից, իսկ եթե զրսվելու էր նաեւ մյուսից, այդ դեռ նրան հայտնի չէր։

Մինչ հրթիռը արագություն էր զարգացնում, պրոֆեսորն ամբողջ գիշեր չհեռացավ իր սիրած հեռադիտակից՝ ութ դյույմանոց ռեֆլեկտորից, անընդհատ հետեւելով հրթիռի ընթացքին։ Արտանետիչ գազերի առաջ դրած պստիկ առկայծող կետը միայն այն դեպքում կարելի էր տեսնել, եթե գիտես, թե երկնքի որ տեղամասին

պիտի հետեւես։ Թվում էր, թե հաջորդ օրը շատ անհետաքրքիր էլ լինելու։ Անչափ հուզվածությունից պրոֆեսորը ոչ մի կերպ չէր կարողանում քնել։ Եվ, այնուամենայնիվ, հերր պրոֆեսորը գտավ ելքը. սկսեց զբաղվել տնային տնտեսությամբ։ Նա ջանասիրաբար փայլեցնում էր կաթսաներն ու թավաները եւ ամբողջովին կլանված էր այդ գործով, երբ հանկարծ լսեց համառ ու սուր, ականջ ծակող ծվծվոց եւ վանդակի մեջ տեսավ եւս մեկ պստլիկ մոխրագույն մկնիկի։ Նրա պոչը Միտկիի պոչից կարճ էր, եւ բեղիկներն էլ նրա բեղիկներից կարճ էին։

— Շաթ գուտ, շաթ գուտ,— ասաց պրոֆեսորը։— Ի՞նչ մենք ունենալ այստեղ։ Միննի՞։ Այս Միննի փնտռել իր Միտկի՞։

Պրոֆեսորը կենսաբան չէր, բայց նա իրավացի էր այս հարցում։ Դա Միտկիի սիրասուն տիկինն էր։ Թե ուղեղի ինչ տարօրինակություն էր նրան դրդել մտնել առանց խայծի այս վանդակը՝ պրոֆեսորը ոչ միայն չգիտեր, այլեւ չէր էլ հետաքրքրվում։ Միննիի արարքով հիացած՝ նա իսկույն մի մեծ կտոր պանիր մտցրեց ճաղերից ներս։

Ինչպես երեւում է, Միննին որոշել էր բնակվել հենց այնտեղ, որտեղից հեռավոր ճանապարհորդության էր մեկնել իր ամուսինը՝ պրոֆեսորի հույսերի մերմնացումը։ Արդյո՞ք նա անհանգստանում էր իր ընտանիքի համար։ ոչ ոք չգիտե։ Բայց նա անհանգստանալու բան չուներ։ Երեխաներն արդեն այնքան մեծ էին, որ իրենք կարող էին իրենց մասին հոգալ, մանավանդ մի այսպիսի տան մեջ, որտեղ շատ հեշտ էր սառնարանի մեջ մտնելը եւ խելքից դուրս կուշտ ուտելը։

— Ախխա՜, Միննի, իսկ հիմա լինել մութ եւ կարելի փնտռել քո ամուսին, նրա կրակե հետք երկնքում։ Ճիշտ է, դա փոքրիքմոքրիք հետք, աստղագետներ նրան չտեսնել, նրանք չիմանալ ուր նայել։ Իսկ մենք իմանալ։

Նա դառնալ շաբթ նշանավոր, այտ Միտկի, երբ մենք պատմել աշխարհ նրա մասին եւ իմ հոթիռ մասին։ Հասկանա՞լ դու, մենք դեռ ոչինչ չասել ոչ մեկի։ Մենք սպասել ու ասել բոլոր միասին։ վաղը առավոտ մենք… Այ նա, Միննի։ Այ հետք, շատ տույլ։ Ես քեզ կարող մոտեցնել հեռադիտակ ու թողնել քեզ նայել, բայց մենրադիտակ չէ քո աչքի համար, ու ես չիմանալ ինչպես…

Գրետե հարյուռ հազառ մղոն, Միննի, արագացում առայժմ աճել։ Բայց դա աճել դեր ոչ շատ ու վերջը գալ։ Մեր Միտկի թռչել մի քիչ ավելի առագ, քան մենք հաշվֆել, չէ՞։ Այժմ հաստատ նա հաղթահարել Երկրի ձքոխականություն եւ իջնել Լուսնի վրա։

Բնականաբար այն, որ Միննին ծվծվաց ի պատասխան, զուտ պատահականության խաղ էր։

— Ախ, հա, Միննի, պստլիկ Միննի, ես գիտենալ, գիտենալ։ Մենք երբեկ չտեսնել նորից մեր Միտկի, եւ ես նույնիսք ուզել տապալել մեր փորց։ Բայց կա հատուցում, Միննի։ Նա դառնալ ամենանշանավոր մուկ։ Աստղային մուկ։ Արաջին կենտանի էակ, որ դուրս գալ Երկրային ձգողականության սահմանից։

Գիշերը վերջ չուներ։ Մերթ ընդ մերթ բարձր ամպերի պատճառով տեսանելիությունը կորչում էր։

— Միննի, ես ուզել սարքել քեզ համար լավ տուն։ Դու սկսել մտածել, որ դու ազատ։ Առանց երկաթե վանդակ, ինչպես հիմա անել գազանանոց։

Եվ այսպես, որպեսզի ժամանակը սպառի, մինչեւ որ ամպերը կրցվեն, պրոֆեսորը սկսեց նոր տնակ սարքել Միննիի համար։ Դա կես դյույմ հաստությամբ եւ քառակուսի ֆուտ մակերեսով փայտե արկղի հատակ էր։ Պրոֆեսորն այն դրեց սեղանի վրա եւ ոչ մի պատ չսարքեց։

Չորս կողմից եզրերը ծածկելով մետաղյա ֆոլգայով, պրոֆեսորը արկղի հատակը դրեց ավելի մեծ տախտակի վրա, որը նույնպես եզրապատված էր ֆոլգայով։ Երկու մետաղե շերտեցից բարակ լարեր էին ձգվում դեպի փոքրիկ տրանսֆորմատորի տարբեր բեւեռները։

— Իսկ հիմա, Միննի, դու ապրել քո կղսի, ունենալ շատշատ պանիր ու ջուր, ու դու ասել, որ սա հիանալի տեխ ապրելու համար։ Չմոտենաս ծայրին, հոսանք ստանալ։ Դա չլինել շատ ցավոտ, բայց դու էլ չուզենալ նորից դա անել, չէ՞։ Եվ…

Եվս մեկ գիշեր անցավ։

Միննին երջանիկ էր իր կղզում, նա լավ սովորեց դասը։ Այժմ նա ոչ մի դեպքում չէր կանգնի ֆոլգայի շերտի վրա։ Այս կղզյակը իսկապես մկնային դրախտ էր։ Պանրի սարը ավելի մեծ էր, քան Միննին ինքը, եւ ուտելը շատ ժամանակ էր խլում։ Մուկ եւ պանիր, շուտով մեկը կանցնի մյուսին։

Սակայն պրոֆեսոր Օբերբյուրգերին չէր հուզում այդ պրոբլեմը։ Նրան այլ պրոբլեմներ էին հուզում։ Նա արդեն քանիերորդ անգամ ստուգում եւ կրկին ստուգում էր ինքն իրեն, ու իր ութ դյույմանոց հեռադիտակը նորից ուղղում դեպի երկինք, տանիքի մեջ եղած անցքի միջով…

Այո, ի վերջո ամուրին էլ ունի իր առավելությունները։ Եթե ամուրի սիրտն ուզում է տանիքում անցք ունենալ, նա ուղղակի բացում է այդ անցքը, եւ չկա մեկը, որ նրան անվանի խելագար։ Իսկ ձմռան ու անձրեւի ժամանակ միշտ կարելի է թիթեղագործին կանչել կամ էլ դիմել բրեզենտի օգնությանը։

Սակայն թույլ կրակի հետքը չէր երեւում։ Պրոֆեսորը խոժոռում էր հոնքերը եւ հաշվում, նորից էր հաշվում եւ հեռադիտակը տեղադրում էր բոպեում երեք տասնորդական արագությամբ, բայց եւ այնպես ոչինչ չէր տեսնում…

— Միննի, ինչոր անկառգություն։ Կամ էլ շառժիչ դուռս գալ շարքից, կամ…

Պարզապես հրթիռը շեղվել էր հաշվարկային պարաբոլից:

Մնում էր միայն մի բան՝ փնտրել ընդլայնվող պարուրագծով։ Հրթիռը գտնվեց միայն երկու ժամ հետո։ Նա արդեն հինգ աստիճանով շեղվել էր իր ուղուց եւ շատ տարօրինակ էր պահում իրեն։ Ինչպես ասում են օդագնացության մեջ՝ նավակի աչքի առաջ անցավ նեղացող պարույրով, որը նման էր ուղեծրի, եւ պտտվեց կենտրոնացող պարուրագծով:

Պրոֆեսորը շրջվեց Միննիի կողմը։ Նրա դեմքը գունատ էր:

— Դա անհնարին, Միննի։ Իմ սեփական աչքեր, բայց դա չի կարող լինել։ Նույնիսկ եթե մեկ շարժիչ դադառել աշխատել, դա անհնարին, այդպիսի անսպասելի շռջաններ:

Պրոֆեսորը արդեն որերորդ անգամ ձեռքը վերցրեց մատիտը, որպեսզի ստուգի իր մեջ ծագած կասկածները:

— Միննի, նա շատ առգելակել, այդպես պիտի չլիներ, եթե նույնիսկ շառժիչ կանգ առնել:

Հեռադիտակն ու հաշվարկները առավոտ վաղ չտվեցին հանելլուկը լուծելու բանալին։ Գործում էր մի ինչոր անհայտ ուժ, որը անհնարին էր բացատրել հռթիռի վարքով կամ ենթադրվող մարմնի ձգողականությամբ:

Բացվեց գորշ, անհասկանալի օրը:

— Խեղճ Միտկի։ Իմ Միննի, մենք ստիպված գաղտնի պահել այս տեղեկություն։ Մենք չհամարձակվել հրապարակել, ինչ տեսել, ոչ ոք պիտի չհավատալ։ Ինձ թվալ, որ ես ինքս էլ չհավատալ, գուցե ես հոքնել, չքնել ու ինձ թվալ, թե ես տեսնել…

Անցավ մի քանի ժամ:

— Բայց։ Միննի, հույս կա։ Նա հինգ հազառ մղոն հեռավորության վրա։ Նա նորից ընկնել Երկիր, բայց ես անկարող ասել, որտեղ։ Ես ենթադրել, եթե այդպես պատահել, ես հաշվել հռթիռի ճանապարհ, բայց այդ համակենտրոն հրջան, Միննի,

նույնիսկ ինք Էյնշտեյն չկառող տեսնել վայրէջքի տեղ։ Ոչ միայն ես։ Պիտի հույս դնել, որ մենք լսել, երբ հրթիռ ընկնել:

Ամպոտ օր։ Խավարչտին գիշեր, որը թաքցնում է իր գաղտնիքները:

— Միննի, մեր խեղճ Միտկի։ Ինչ պատահե՞լ:

Իսկ ամեն ինչի պատճառը Պրկսլն էր:

Պրկսլը աստերոիդ է։ Երկրացիք մինչեւ այժմ չեն հայտնագործել Պրկսլը (եւ դա ունի իր պատճառները): Նրան այդպես են կոչել ոչ թե Երկրի աստղագետները, այլ սեփական բնակիչները։ Իհարկե, այս տառադարձությունը միայն մոտավորապես է հաղորդում նրա անունը, որով կոչել են բնակիչները։ Այո՛։ Պրկսլը բնակչություն ունի:

Ո՛ւմ մտքով կանցներ։ Դեպի Լուսին հրթիռ ուղարկելու պրոֆեսոր Օբերբյուրգերի փորձը բավական տարօրինակ հետեւանքների հանգեցրեց:

Միթե ձեր մտքով կանցնի, որ աստերոիդը կարող է բուժել հարբեցողին։ Ոմն Չարլզ Ուինսլոու՝ Բրիջպորտի բնակիչ, շշին ձեռք չի տալիս այն օրից ի վեց, երբ Գրոուվստրիթում մի մկնիկ նրան հարցրեց Հարտֆորդ տանող ճանապարհը։ Մկնիկը հագած էր վառ կարմիր վարտիք եւ դեղին ձեռնոցներ։ Դա տեղի ունեցավ այն օրից տասնհինգ ամիս հետո, երբ պրոֆեսորը կորցրեց իր հրթիռը։ Բայց ավելի լավ է ամեն ինչ հերթով պատմենք:

Պրկսլը աստերոիդ է։ Մեկն այն պիղծ երկնային մարմիններից, որոնց Երկրի աստղագետները անվանում են երկնքի պարազիտներ։ Նրանք վատացնում են տեսանելիությունը, խանգարում դիտել նոր միգամածությունները:

Հիսուն հազար լու սեւ շատ վրա:

Նրանց մեծ մասը անասելի պստիկ են։ Վերջին ժամանակներս աստղագետները սկսեցին հայտնաբերել, որ որոշ աստերոիդներ շատ մոտ են թռչում Երկրից։ 1932 թվականին գիտնականներին հուզեց այն լուրը, որ Աշորը 10 միլիոն մղոնով մոտեցել է Երկրին՝ ձեռքդ երկարես՝ կհասնի։ Այնուհետեւ Ապոլոնը անցավ կրկնակի մոտիկությամբ, իսկ 1936 թվականին Ադոնիսը անցավ Երկրի մոիով մեկուկես մղոնից էլ պակաս հեռավորությամբ:

1937 թվականին Հերմեսը մոտեցավ Երկրին ավելի քան կես միլիոն մղոն, բայց երբ աստղագետները հաշվեցին նրա ուղեծիրը եւ հայտնաբերեցին, որ մեկ մղոն երկարությամբ փոքրիկ աստերոիդը կարող է անցնել Երկրից 220 հազար մղոն հեռավորությամբ, այսինքն՝ ավելի մոտիտկ լինել Երկրին, քան Լուսինը, նրանք շատ խիստ հուզվեցին:

Հնարավոր է, որ նրանք երբեւիցե էլ ավելի շատ հուզվեն, եթե հայտնաբերեն 3/8 մղոն չափով աստերոիդ Պրկսլը, տիեզերական աղբը, որը ուղերթ է կատարում Լուսնի կողքով, եւ իմանան, որ նա 100 հազար մղոնից էլ պակաս հեռավորությամբ շատ հաճախ անցնում է տարածության մեջ տեղաշարժվող մեր մոլորակի կողքով։ Միայն Երկրին այդքան մոտենալու դեպքում մեր աստղագետները կարող են նրան տեսնել։ Բանն այն է, որ Պրկսլը լույս չի անդրադարձնում։ Ահա արդեն մի քանի միլիոն տարի է, ինչ նրա բնակիչները իրենց աստերոիդը պատել են լույս կլանող սեւ գույնով՝ հիրավի տիտանական աշխատանք կես դյույմ հասակ ունեցող կենդանի էակների համար, բայց դա արժե՛ր անել։ Երբ պրկսլանցիները նաեւ փոխեցին իրենց ուղեծիրը, դրանով փրկվեցին իրենց թշնամիներից՝ Դիեմուս մոլորակի ութդյույմանոց ավազակներից:

Փոքրիկ աստերոիդը այլեւս չէր անդրադարձնում արեւի ճառագայթները ու չէր երեւում:

Պրկսլի քաղաքակրթությունը հաշվվում է միլիոնավոր տարիներով։ Եվ այսօր էլ պրկսլացիները ամեն տարի «ներկում» են իրենց աշխարհը, բայց ավելի շուտ ավանդույթի ուժով, քան թշնամիներից վախենալուց:

Հզոր, բայց չեզոք քաղաքակրթությունը ասես լուռ քարացել է աղմկոտ տիեզերքում։ Ահա հենց այստեղ էլ ընկավ Միտկի Մաուսը:

Քլերլոտը՝ պրկսլանցիների ամենախոշոր գիտնականը, հրեց իր ասիստենտ Բեմջի այն տեղը, որը երկրացիներն անվանում են ուս:

— Մի տես, այն ի՞նչ է մոտենում Պրկսլին։ Ինչոր արհեստական մարմին:

Բամջը հայացքը հառեց էկրանին, իսկ հետո մտաալիքը ուղղեց մի մեխանիզմի, որը հզոր ներգործություն ունեցավ էլեկտրական դաշտի վրա։ Պատկերը ցատկոտում էր, ցրվում, իսկ հետո կենտրոնանում:

— Պետք է ասեմ, որ չափազանց կոպիտ աշխատանք է,— նկատեց Բեմջը։— Հրթիռային վառելանյութով պարզունակ հրթիռ։ Հիմա կստուգեմ, թե որ մոլորակից է:

Նա վերցրեց էկրանի մոտի հաշվիչների ցուցմունքները, եւ որոշ ժամանակ հետո հաշվիչ մեքենան մշակելով տվյալները, տվեց պատասխանը։ Հետո նա մտաալիքը ուղղեց պրոյեկտորային կապի վրա, միաժամանակ ընդունելով համր հաղորդումը։ Երկրից թռիչքի ստույգ տեղը եւ ստույգ ժամանակը։ Հետագծի աղեղը եւ աղեղի այն կետը, որտեղ Պրկսլի տիեզերական ձգողականության ազդեցության տակ տեղի է ունեցել շեղումը։ Հրթիռի թռիչքի սկզբնական նպատակակետը, հավանաբար, երկրային Լուսինն է։ Պրկսլ ժամանելու տեղը եւ ժամանակը, եթե հրթիռի ուղղությունը մնա անփոփոխ:

— Երկիր,— մտախոհ ասաց Քլերլոտը։— Երբ մենք վերջին անգամ ստուգում էինք, նրանք շատ հեռու էին հրթիռային ճանապարհորդությունից։ Այնտեղ ինչոր խաչակրաց արշավանքներ էին, կրոնական պատերազմներ, չէ՞:

Բեմջը գլխով արեց:

— Բաբան, նետ, աղեղ։ Այդ ժամանակներից ի վեր նրանք շատ են առաջ գնացել, եթե նույնիսկ այս փորձնական հրթիռը լինի ամենանախնական փուլում։ Ոչնչացնե՞նք, քանի դեռ մեզ չի հասել:

Քլերլոտը մտախոհ օրորեց գլուխը:

— Արի մտածենք։ Այժմ մենք կարող ենք այլեւս Երկիր չուղեւորվել։ Այս հրթիռի հիման վրա մենք կորոշենք նրանց զարգացման մակարդակը:

— Բայց այդ դեպքում ստիպված կլինենք…

— Իհարկե։ Միացրու ղեկավարման կենտրոնը։ Հրամայից նրանց հրթիռը փոխադրել ժամանակավոր ուղեծիր, մինչեւ կպատրաստեն վայրէջքի հրապարակ։ Եվ չմոռանաք ամբողջ վառելանյութը թափել մինչեւ վայրէջքը:

— Ժամանակավոր ուժադաշտ վայրէջքի կետի շուրջը, եթե…

— Բնականաբար:

Ու թեեւ գրեթե չկար մթնոլորտ, որտեղ ամորտիզատորները կարող էին աշխատել, հրթիռը շատ սահուն վայրէջք կատարեց, ու Միտկին իր մութ խցիկում միայն մի բան զգաց, որ սոսկալի աղմուկը դադարեց:

Մկնիկն իրեն լավ զգաց։ Նա մի քիչ պանիր կերավ, որը շռայլորեն նրա հետ դրել էր պրոֆեսորը, հետո նորից աշխատանքի անցավ։ Նա կրծելով անցք էր բացում իր խցիկի փայտե պատի մեջ։ Այդ պատը պրոֆեսորը հատուկ դրել էր՝ մտահոգվելով մկնիկի հոգեվիճակի մասին։ Նա գիտեր, որ Միտկին ամբողջ ճանապարհին պիտի զբաղված լինի կրծելով անցք բացելով, եւ դա նրան կփրկի հիստերիայի մեջ ընկնելուց:

Մտահոգացումն իրեն արդարացրել էր. գլխովին տարվելով աշխատանքով, Միտկին չէր տառապում խցիկի մթությունից եւ մենակությունից։ Իսկ այժմ, երբ ամեն ինչ խաղաղվեց, նա կրկնակի եռանդով սկսեց կրծել փայտը եւ երբեք այդքան իրեն երջանիկ չէր զգացել։ Մկնիկը չէր ենթադրում, որ մեկ դյույմանոց փայտը ծակելուց հետո դեմ է առնելու մետաղի, եւ իր բոլոր ջանքերը ջուրն են թափվելու։ Բայց շատ հաճախ է պատահում, որ Միտկիից խելոք էակներն են իրենց ուժերից մեծ գործ բռնում:

Այդ ընթացքում Քլերլոտը, Բեմջը եւ հազարավոր պրկսլանցիներ հայացքները չէին կտրում վիթխարի հրթիռից, որը նույնիսկ կողքի վրա ընկած վիճակում աշխարակի պես վեր էր խոյացել։ Մի քանի պատանիներ, մոռանալով անտեսանելի ուժադաշտի մասին, շատ մոտեցան հրթիռին եւ իսկույն էլ մի կողմ փախան, ջղայնացած տրորելով ցավացած գլուխները։

Ուսումնասիրելով պսիխոգրաֆի նշումները, Քլերլոտը ասաց Բեմջին։

Հրթիռի ներսում կենդանի էակ կա։ Տպավորությունները խառն են։ Կենդանի էակ եզակի թվով, բայց ես չեմ կարողանում որսալ նրա մտքերի ընթացքը։ Կարծես, նա ատամներով ինչոր բան է անում։

— Դա երկրացի չէ, մարդ չէ։ Նրանցից յուրաքանչյուրը շատ ավելի մեծ է այս վիթխարի հրթիռից։ Հնարավոր է, նրանց չի հաջողվել իրենց չափով հրթիռ եւ նրանք ուղարկել են ենթափորձային կենդանի՝ մեր վուրասների նման։

— Կարծում եմ, որ դու իրավացի ես, Բեմջ։ Եթե մենք մանրակրկիտ ուսումնասիրենք այդ էակի ուղեղը, թերեւս, բավական տեղեկություններ կստանանք Երկրի մասին։ Արի դուռը բացենք։

— Իսկ օ՞դը։ Չէ որ երկրացիներին ծանր, խիտ մթնոլորտ է հարկավոր։

— Մենք կպահմանենք ուժադաշտը, ուրեմն եւ՝ օդը։ Իհարկե, հրթիռի մեջ պետք է լինի օդ արտադրող սարք, թե չէ այդ էակը չէր դիմանա ճանապարհորդությանը,— ասաց պրոֆեսոր Քլերլոտը ու նստեց կառավարման պուլտի մոտ։

Եվ ուժադաշտը դուրս նետեց անտեսանելի շասսին, բացեց արտաքին պտուտակադուռը, թափանցեց ներս, եւ խցիկի դուռը բացվեց։

Ամբողջ Պրկսլը տեսավ, ինչպես իրենց գլխավերեւում մթին տվող մեծ ճեղքում երեւաց մի մոխրագույն հրեշ՝ թավ բեղերով. ամեն մի բեղը պրկսլացու մարմնի չափ էր։

Միտկին ցած թռավ, առաջ քայլեց, սեւ քթիկով դիպավ անտեսանելի արգելքին եւ, ծվծվալով, հետ փախավ դեպի հրթիռը։

Բեմջը չթաքնված զզվանքով նայեց հրեշին եւ ասաց.

— Միանգամայն ակնհայտ է, որ նա մտավորապես ավելի քիչ է զարգացած, քան մեր վուրասը։ Մենք պարզապես կարող էինք ճառռագայթ…

— Ոչ, դու այնքան էլ ճիշտ չես,— ընդհատեց նրան՝ Քլերլոտը։— Դու մոռանում ես ակնհայտ փաստերը։ Այս էակը, իհարկե, բանական չէ, բայց յուրաքանչյուր կենդանու ենթագիտակցության մեջ պահպանվում է այն տպավորությունը կամ կերպարը, որը ինչոր ներգործողություն է ունեցել նրա վրա։ Եթե այս հրեշը երբեւիցե լսել է երկրացիների խոսակցությունը կամ էլ տեսել է նրանց ստեղծած մի որեւէ բանը, բացի այս հրթիռից, ապա դա տպավորվել է նրա ուղեղում։ Այժմ դու հասկացա՞ր, թե ես ինչ նկատի ունեմ:

— Իհարկե, Քլերլոտ, ես պարզապես հիմար եմ։ Մի բան պարզ է, դատելով այս հրթիռից, մենք երկրացիներից վախենալու բան չունենք։ Արի այս անբանական էակին ստիպենք հիշել այն, ինչ նա ընկալել է իր ծննդյան պահից սկսած, հետեւենք նրա բոլոր զգացողություններին:

— Բայց դրա անհրաժեշտությունը չկա:

— Չկա՞։ Դու նկատի ունես X19 ալիքնե՞րը:

— Իհարկե։ Նրանք չեն ազդի հիշողության վրա, բայց կավելացնեն նրա խելքը, այժմ այն, հավանաբար, հավասար է ընդամենը 0,001ի։ Այս էակը գրեթե ավտոմատիկորեն հիշողության մեջ կվերականգնի անհրաժեշտ տպավորությունները եւ կգիտակցի դրանք:

— Դու ուզում ես նրան մեզ պես խելացի դարձնել,— անհանգստացած հարցրեց Բեմջը:

— Մե՞զ պես։ Ոչ։ Նրա խելքը կաճի 0,2ով եւ, դատելով ըստ հրթիռի ու Երկրի մասին մեր հիշողությունների, դա այժմյան երկրացիների մտավոր մակարդակն է:

— Հըմ, այո։ Նա կգիտակցի երկրային տպավորությունները, իսկ հետո մենք մեր լեզուն կսովորեցնենք նրան:

Ուշադիր ուսումնասիրելով պստխոգրաֆի ցուցմունքները, Քլերլոտը պատասխանեց.

— Չեմ կարծում։ Նա կխոսի իր լեզվով։ Նրա ենթագիտակցության մեջ ես տարբերում եմ հիշողության մեջ տպավորված երկար խոսակցություններ։ Տարօրինակ է, բայց թվում է, թե դրանք մենախոսություններ են եւ պատկանում են միեւնույն մարդուն։ Նրա լեզուն պարզ է։ Ես կարծում եմ, որ նրա համար դժվար կլինի սովորել հաղորդակցման մեր եղանակը՝ նույնիսկ մեր օգնության դեպքում էլ։ Ավելի հեշտ կլինի, եթե մենք ուսումնասիրենք նրա եղանակը՝ մենք դա կանենք հաշված րոպեների ընթացքում, էակի վրա ազդելով X19 ճառագայթներով։ Մի րոպե սպասիր։ Անընդհատ նույն բառն է։ Կարծես, թե դա ինչոր բան է նշանակում էակի համար։ Միտկի։ Ենթադրում եմ, որ դա նրա անունն է, դա նա իր հետ է կապում:

— Եվ նրա համար տեղ…

— Անպայման։ Զբաղվիր դրանով…

Եթե ասենք, որ կատարված փորձը ապշեցուցիչ էր Միտկիի համար, ապա ոչինչ ասած չենք լինի։ Գիտելիքները զարմանալի բան են, եթե նույնիսկ աստիճանաբար ես ձեռք բերում դրանք։ Բայց երբ այդ գիտելիքները ձեր գլխին են թափվում…

Դրան ավելացնենք ամեն տեսակ մանրուքներ, որոնց մասին միաժամանակ պետք էր մտածել, դե, ասենք՝ մկնիկի ձայնալարերի մասին։ Նրանք հարմարեցված չէին այն լեզվով խոսելու համար, որը, ինչպես այժմ պարզվեց, նա գիտեր։ Բեմջը այդ էլ կարգավորեց։ Նա վիրահատության պես մի բան արեց, որի ժամանակ Միտկին ոչինչ չզգաց, նույնիսկ արդեն օժտված լինելով նոր գիտակցությամբ։ Պրկսլանցիները մկնիկին չբացատրեցին, որ կիրառել են «ջի» չափումը եւ հասել են ներքին էությանը, առանց խախտելու արտաքին թաղանթը։

Նրանք որոշեցին, որ գիտելիքների այդ բնագավառը Միտկիին չի վերաբերում, մանավանդ որ նրանց հարկավոր էր ամենից առաջ Միտկիից ստանալ գիտելիքներ, եւ ոչ թե նրան սովորեցնել։ Բեմջը, Քլերլոտը եւ մյուսները իրենց համար մեծ պատիվ էին համարում Միտկիի հետ խոսելը։ Եթե նրանցից մեկը լռում էր, ապա մյուսն էր շարունակում զրույցը։

Միտկին չէր կասկածում, որ կկարողանա պատասխանել հարցին, քանի դեռ հարցը չէր տրված։ Հետո նա ի մի բերեց իր գիտելիքները, չհասկանալով, թե դա ինչպես է անում (համենայն դեպս, ինձանից եւ ձեզանից շատ չհասկանալով, թե ինչպես ենք մենք պատասխանում հարցերին), եւ պատասխանեց։

— Միտկի, լեզուն, որով դուք խոսում, ընդունվա՞ծ համայն Երկրում,— հարցրեց Բեմջը։

Մկնիկը նախկինում երբեք չէր մտածել այդ մասին, բայց վրա տվեց պատրաստի պատասխանը։

— Ոչ։ Սա անգլերեն, բայց հիշում եմ, որ հերր պրոֆեսորը խոսել այն ժամանակ ուրիշ լեզու մասին։ Կարծես, նա ինքն էլ չիմանալ այդ լեզու, բայց երբ գալ Ամերիկա, խոսել միայն անգլերեն։ Որ աֆելի լավ իմանալ։ Գեխեցիկ լեզու, չէ՞։

Բեմջը ի պատասխան միայն փնչացրեց։

— Միտկի, մենք ուզել քեզ նախասգուշացնել,— ասաց Քլերլոտը։— Սգուշացիր էլեկտրականությունից։ Քո ուղեղի նոր մոլեկուլար կառուցվացք անկայուն եւ…

Անհամբեր Բեմջը ընդհատեց Քլերլոտին եւ հաջորդ հարցը տվեց Միտկիին.

— Միտկի, իսկ դու վստահ, որ հերր պրոֆեսոր ամենից գլղավոր քիտնական հրթիռի գցով…

— Հիմնականում, այո, Բեմջ։ Կան ուրիշներ, նրանք իմանալ շատ, բայց միայն մի բան՝ վարելանյուտ, մաթեմատիկա, աստղաֆիզիկա։ Իսկ բոլոր գիտելիքներ միասին՝ նա գլղաֆոր:

— Հրաշալի,— ասաց Բեմջը:

Ճստիկ մոխրագույն մկնիկը կեսդյույմանոց պրկսլանցիների կողքին թվում էր դինոզավր։ Միտկիի մի անգամ կծելը բավական էր, որ ցանկացածդ պրկսլանցին շունչը փչեր։ Բայց մկնիկը շատ քնքուշ էր եւ բարեհոգի, նրա մտքովն անգամ չէր անցնում այդպիսի բան անել, իսկ պրկսլանցիների մտքով էլ չէր անցնում նրանից վախենալ:

Ուսումնասիրելով նրա մտավոր ունակությունները, նրանք բառացիորեն ոտիցգլուխ լրիվ ճանաչեցին Միտկիին։ Նրանք բավական մեծ աշխատանք կատարեցին, ուսումնասիրելով նաեւ մկնիկի ֆիզիկական հնարավորությունները, բայց դա արեցին «ջի» չափումի օգնությամբ։ Միտկին այդ մասին իսկի գլխի էլ չնկավ:

Պրկսլացիները ուսումնասիրեցին նրա ուղեղի պարունակությունը եւ պարզեցին նրան հայտնի բոլոր բաները եւ նույնիսկ որոշ ոչ հայտնի բաներ։ Ու նրանք շատ կապվեցին մկնիկի հետ:

Մի անգամ Քլերլոտը հարցրեց.

— Միտկի, Երկրի քաղաքաքիրտ ժողովուրտ հագնել շորեր, չէ՞։ Եթե դու ուզենալ մկներին սարքեն այնպես խելոք ինչպես մառդ, ուրեմն պետք է հաքնել շոր:

— Փառահեխ միտք, հերր Քլերլոտ։ Ու ես հաստաթ գիտենալ, թե ինչպես ես ուզում հաքնվել։ Մի անքամ հերր պրոֆեսոր ինձ ցույց տալ նկառիչ Դիսնեյ մուկ։ Նա հաքել գեխեցիկ շոր։ Պրոֆեսոր ինձ տալ այդ մուկ անուն:

— Իսկ ինչպե՞ս նա հաքել,— աշխուժորեն հետաքրքրվեցին պրկսլանցիները:

— Վառ կարմիր վառտիք, երկու մեց դեխին կոճակ առջեւից, երկուսը՝ հետեւից։ Հետեւի թաթերին դեխին կոշիկներ եւ դեխին ձեռնոց առչեւի թաթեր։ Պոչի համար վառտիք ծակ ունենալ:

— Օքե՛յ, Միտկի։ Հինգ բոփե հետո դու ստանալ այդպես կոստյում։

Այս խոսակցությունը տեղի ունեցավ մկնիկին հրաժեշտ տալու նախօրյակին։ Սկզբում Բեմջը առաջարկեց սպասել, որ Պրկսլը մոտենա Երկրին 150 մղոն, բայց Քլերլոտը առարկեց, որ հիսունհինգ երկրային տարի պետք է սպասել այդ պահին, իսկ Միտկին այդքան երկար չի ապրի։

Վերջապես, Պրկսլիի գիտնականները եկան միաձայն որոշման։ Նրանք հրթիռի մեջ վառելանյութ լցրին, որի շնորհիվ Միտկին հեշտությամբ կհաղթահարեր վերադարձի ճանապարհի միլիոն ու քառորդ մղոնները։ Եվ երբ վրա հասավ բաժանման օրը, պրկեսլացիներն ասացին մկնիկին.

— Միտկի, մենք քեզ ամեն ինչ անել, ինչ մենք կարողանալ։ Հրթիռ լավ պատրաստել, դու վայրէջք կատարել այնտեղ, որտեղից թռել քո Երկրից։ Իհարկե, դու թռչել պիտի երկար, եւ կառող լինել մի քիչ սխալ, երբ լինի վայրէջք, բայց սխալ լինի ոչ մեց, ուստի մնացած բոլոր՝ դու պիտի գլուխ հանել։

— Շնորհակալություն, հերր Քլերլոտ, հերր Բեմշ։ Ցտեսություն։

— Ցտեսություն, Միտկի։ Մենք չուզենալ բաշանվել քեզնից։

Մեկ միլիոն եւ քառորդ մղոն տարածության համար վայրէջքի հաշվարկման ճշգրտությունը իսկապես որ գերազանց էր։ Հրթիռը վայրէջք կատարեց Բրիջպորտից տասը մղոն հեռավորության վրա եւ վաթսուն մղոն հեռու Հարտֆորդից, որտեղ ապրում էր պրոֆեսոր Օբերբյուրգերը։

Պրկսլանցիներն ամեն ինչ նախատեսել էին նաեւ այն դեպքի համար, եթե հրթիռը հանկարծ ընկներ ջրի մեջ։ Հրթիռն սկսել էր ընկղմվել, բայց դեռ չէր իջել ջրի տակ, երբ Միտկին դուռը բացեց (դուռն այնպես էր սարքված, որ ներսից էր բացվում) ու դուրս եկավ հրթիռից։

Մկինկը բավականաչափ սինթետիկ կեր ուներ, այնպես որ կարող էր մի շաբաթ դիմանալ ջրի վրա, բայց, բարեբախտաբար, դրա հարկը չեղավ։ Նա կառչեց Բոստոնից դուրս եկած մի գիշերային նավի խարսխաշղթայից եւ այդպես հասավ Բրիջպորտ։ Սակայն ափ դուրս գալուց նա կատարեց Քլերլոտին տված խոստումը եւ ջուրը գցեց իր հերմետիկ կոստյումը՝ մի քանի տեղից կրծեց, գազը դուրս եկավ, եւ մկնիկի աչքի առաջ կոստյումը իջավ վրի հատակը։

Միտկին բնազդորեն զգում էր, որ քանի դեռ ինքը չի հասել պրոֆեսոր Օբերբյուրգերին եւ պատմել նրան իր գլխին եկածը, հարկավոր է խուսափել կենդանի էակներից։ Ամենից վտանգավորը նավահանգստի առնետներն էին։ Նրանց համար բոլորովին դժվար չէր մի բոպեում պատառպատառ անել ճստիկ մկնիկին։

Բայց բանականությունը միշտ է հաղթում։ Հրամայաբար վեր բարձրացնելով դղին ձեռնոցով թաթիկը, Միտկին ասաց.

— Դե փախե՛գ։

Ու նրանք փախան։ Միտկիի նման բան նրանք առաջին անգամ էին տեսնում։ Եվ նա անասելի տպավորություն էր գործել։

Այդպես վարվեց նաեւ բրիջպորտցի հարբեցողը, որից Միտկին հարցրեց Հարտֆորդի ճանապարհը։ Մենք արդեն ասել ենք, որ մկնիկը միայն մեկ անգամ է հարցով դիմել մարդուն։ Նա զգուշություն էր պահրանում, ընտրել էր այնպիսի ստրատեգիական դիրք, որը անհաջողության դեպքում թույլ կտար իսկույն ծլկել։ Բայց հարբեցողը չքվեց ու սպատասխանեց իրեն տրված հարցին։

Վերջ ի վերջո Միտկին ինքը գլխի ընկավ, թե ինչ պետք է անի։ Նա գնաց քաղաքի հյուսիսային մասը, հասավ բենզինի լցման կայան, թաքնվեց այնտեղ, ու հենց որ իմացավ, որ մեքենա է գնում Հարտֆորդ, անմիջապես թաքնվեց մեքենայի մեջ։

Մնում էր ամենահեշտ բանը։ Պրկսլանցիների հաշվարկները ցույց էին տվել, որ հրթիռի թռիչքի կետը գտնվում էր հինգ երկրային մղոն հյուսիսարեւմուտք այն տեղից, որը (Միտկին դա գիտեր պրոֆեսորի մենախոսություններից) Հարտֆորդ քաղաքն էր։

Ու մկնիկը տեղ հասավ։

— Հելլո, պրոֆեսոր։

Հերր պրոֆեսորը անհանգիստ նայեց շուրջը։

— Ի՞նչ։ Դա ո՞վ։

— Դա կամ ես, Միտկի, մկնիկ, որին դուք ուղարկել Լոսին։ Բայց ես չլինել այնտեղ։ Դրա փոխարեն ես…

— Ի՞նչ։ Սա հնարավոր չէ։ Ինչոր մեկը վատ կատակ անել։ Բայց ոչ ոկ չիմանալ իմ հռթիռ։ Երբ դա պատահել, ես չասել ոչ ոք։ Ոչ ոք, միայն ես…

— Եվ ես, պրոֆեսոր։ Սա ճիշտ, ես Միտկի։ Ես հիմա սովորել խոսել, ինպչես դուք խոսել։

— Դու ասել,— սովորե՞լ… Ես չհավատալ։ Ինշու ես քեզ չտեսնել։ Դու ուր ես։

— Ես կամ պատի մեջ, մեծ ծակի մեջ ես թաքնվել։ Ուղղակի ես ուզել իմանալ, որ ամեն ինչ լավ ու դուք ծանռ բան չշպրտել վռաս,— թե չէ ոչ ոք չիմանալ Պրկսլի մասին։

— Ի՞նչ։ Միտկի, եթե դա ճիշտ, ես ու դու չքնել, դու լավ իմանալ, ես քեզ չնեղացնել։

— Օքեյ, պրոֆեսոր։

Միտկին դուրս եկավ պատի ծակից։ Պրոֆեսորը նայեց նրան, աչքերը տրորեց, նորից ու նորից տրորեց։

— Ես ցնտել,— վերջապես ասաց նա։— Կարմիր վարտիք ու դեխին… Ոչ, դա անհնառ… Ես ցնտել…

— Ոչ։ Պրոֆեսոր։ Լսել, ես պատմել։

Ու Միտկին նրան պատմեց իր ճանապարհորդության պատմությունը։ Արդեն լույսը բացվում էր, իսկ պրոֆեսորն ու մկնիկը շարունակում էին խոսել։

— Իսկ ֆրաու Միննի, քո կին, ապռում քո սենյակ։ Ուզե՞լ տեսնել նրան։

— Կի՞ն,— զարմացավ Միտկին։ Նա բոլորովին մոռացել էր իր ընտանիքի մասին,— չէ որ այդքա՜ն ժամանակ էր անցել։

Իսկ հետո տեղի ունեցավ այն, ինչ չէր կարելի կանխատեսել։ Չէ որ պրոֆեսոր Օբերբյուրգերը չգիտեր այն մասին, որ պրոֆեսոր Քլերլոտը Միտկիին պատվիրել էր զգուշանալ էլեկտրականությունից։ Միտկին նետվեց այն սենյակը, որտեղ առանց պատերի վանդակում ապրում էր Միննին։ Նա քնած էր։ Հենց որ Միտկին նայեց Միննիին, անցյալ օրերի հուշերը կայծակի պես շանթահարեցին նրան։

— Միննի՜,— գոռաց մկնիկը, մոռանալով, որ նա իրեն չի հասկանա։

Եվ նա թաթիկը կպցրեց արգելապատին։

— Սկվիիկ…— ծվծաց մկնիկը էլեկտրական հոսանքի թեթեւ հարվածից։ Հետո լռություն տիրեց։

— Միտկի,— ձայն տվեց պրոֆեսորը,— որտեղ կորել դու, չէ որ մենք շատ հարցեր դեռ չքննառկել։

Ներս մտնելով սենյակ պրոֆեսորը այգաբացի գորշ լույսի տակ տեսավ իրար կպած երկու մոխրագույն մկնիկների։ Միտկիին հնարավոր չէր ճանաչել, որովհետեւ նա արդեն հասցրել էր լրիվ կրծել իրեն ատելի դարձած հագուստը։

— Ի՞նչ պատահել,— հարցրեց պրոֆեսորը:

Բայց իսկույն հիշեց, որ Միտկին ծվծվաց էլեկտրական հոսանքի հարվածից, եւ աղոտ կասկածը տիրեց նրան:

— Միտկի, խոսել ինձ հետ:

Լռություն:

— Միտկի։ Դու նորից սովորական մուկ,— ժպտիաց պրոֆեսորը։— Բայց վերադառնալ իր ընտանիք,— միթե դու ավելի չես երչանիկ:

Որոշ ժամանակ պրոֆեսորը քնքշանքով նայում էր մկնիկներին, հետո նրանց դրեց իր ափի վրա եւ ապա հատակին։ Մի մկնիկը իսկույն փախավ մտավ պատի ճեղքը, մյուսի պստլիկ սեւ աչիկները տարակուսանքով նայեցին հերր Օբերբյուրգերին, իսկ հետո տարակուսանքն անհետացավ:

— Ցտեսություն, Միտկի։ Ապրի մկան պես։ Այդպես ավելի լավ լինել, իմ տան միշտ շատ մանիր լինել քեզ համար:

— Պյուվիկ,— պատասխանեց փոքրիկ մոխրագույն մկնիկը եւ փախավմտավ պատի ճեղքը:

Գուցե նա ուզում էր ասել՝ «Մնաս բարով», իսկ գուկցե եւ չէր ուզում:

1. Potarian Club— բիզնեսմենների ամենատարածված միջազգային ակումբներից մեկը, որտեղ բոլոր հարցերը լուծվում են կլոր սեղանի շուրջը։ (Ծան. ռուս. հր. թարգմ.):